ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/32-2021
«11» 01 2021թ.

«ԻՍԱՏԵՔ ՌՈԲՈՏԻՔՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Վ. ԻՍԱՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Իսաջանյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «**Իսատեք Ռոբոտիքս**» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-41» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «**Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական**» աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 Հավելվածով ներկայացված գնման ժամանակացույցին և N 2 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրին համապատասխան:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, պետք է մինչև 30.04.2020 թվականը Կատարողի կողմից հանձնվեր առաջին փուլի, մինչև 28.07.2020 թվականը՝ երկրորդ փուլի, իսկ մինչև 30.09.2020 թվականը՝ երրորդ փուլի արդյունքները:

Համաձայն սույն պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ ՝ narek.melkumyan@hti.am

նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-41» գնման պայմանագրի 2.1.5 կետը, 2021 թվականի հունվարի 11-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «**Իսատեք Ռոբոտիքս**» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900011027837» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարը՝ 21,243,000 (քսանմեկ միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ գումարը, իսկ տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 106,215 (մեկ հարյուր վեց հազար երկու հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետներում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ հայտնում ենք, որ հնարավոր տույժերի, տուգանքների և պատճառված վնասների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

1/11/2021

X

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Signed by: MELKUMYAN NAREK 3114850200

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կատ. Գնումների բաժին
Հեռ 010 59 00 47